Հավելված N 64
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության
նախարարության գլխավոր քարտուղարի
2025 թվականի սեպտեմբերի 25-ի N 745-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) շուկայի հետազոտության և զարգացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) գլխավոր մասնագետ (ծածկագիրը՝ **24-32.4-Մ2-7**)

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր կամ ավագ մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

ՀՀ, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ. Սարգսյան 3/3

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

1) Իրականացնում է Հայաստանի Հանրապետության և միջազգային տեխնոլոգիական շուկաների ուսումնասիրություն և վերլուծություններ.
2) Իրականացնում է բարձր տեխնոլոգիական ոլորտում հայկական կազմակերպությունների կարողությունների (արտադրանքի, ծառայությունների) գնահատում.
3) Իրականացնում է բարձր տեխնոլոգիական արտադրանքի ու ծառայությունների վաճառքի շուկաների պահանջների, պահանջարկի և արտադրանքի համապատասխանության հետազոտում.
4) Իրականացնում է բարձր տեխնոլոգիական ոլորտում հաճախորդների կարիքների գնահատումը և համագործակցության զարգացմանն ուղղված աշխատանքները.
5) Իրականացնում է բարձր տեխնոլոգիական արտադրանքի ու ծառայությունների վաճառքի, եկամտաբեր գործարքների խթանման աշխատանքները.
6) Իրականացնում է բարձր տեխնոլոգիաների ոլորտում ինովացիոն կարողությունների զարգացման և ոլորտը միջազգային գործընթացներում ներգրավման, ինչպես նաև հայկական տեխնոլոգիական զարգացման գործունեություն իրականացնող ընկերությունների գլոբալացման խթանումը.
7) Իրականացնում է բարձր տեխնոլոգիաների ոլորտում հայկական կազմակերպությունների կարողությունների գնահատման և հայրենական արտադրության՝ բարձր տեխնոլոգիաների արտաքին և ներքին շուկա դուրս բերելու կառուցակարգերի մշակման աշխատանքները.

8) Իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում համաշխարհային առաջատար տեխնոլոգիական ընկերությունների մասնաճյուղերի ստեղծման խթանումը.
9) Բարձր տեխնոլոգիական ոլորտի խթանման նպատակով՝ իրականացնում է ոլորտային միջոցառումների կազմակերպումը (ցուցահանդեսներ, գործարար համաժողովներ, կոնֆերանսներ և այլն)՝ Նախարարության հիմնական և աջակցող մասնագիտական ստորաբաժանումների ներգրավմամբ.
10) Իրականացնում է ոլորտային խորհրդատվության տրամադրում, գործնական առաջարկներ՝ տեղական և միջազգային շուկաներում վաճառքի խթանման, եկամտաբեր գործարքների իրականացման նպատակով.
11) Մասնակցում է բարձր տեխնոլոգիաների ոլորտում միջազգային համագործակցության և զարգացման, ինովացիոն տեխնոլոգիաների ոլորտում քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքներին.
12) Մասնակցում է տեխնոլոգիական ընկերությունների գործունեության աջակցությանն ուղղված աշխատանքներին.
13) Մասնակցում է տեխնոլոգիական գործունեության արդյունքների առևտրայնացման քաղաքականության մշակման աշխատանքներին.
14) Մասնակցում է բարձր տեխնոլոգիական արտադրանքի ու ծառայությունների վաճառքի իրականացման գործարար ծրագրերի և ռազմավարության մշակման աշխատանքներին.
15) Մասնակցում է բարձր տեխնոլոգիական արտադրանքի ու ծառայությունների վաճառքի թիմերի ձևավորման և ղեկավարման աշխատանքներին.
16) Մասնակցում է բարձր տեխնոլոգիական ոլորտում վաճառքի ներկայացուցչությունների աշխատանքի մոնիթորինգին.
17) Մասնակցում է ոլորտային վերապատրաստման և փորձի փոխանակման ծրագրերին.
18) Իրականացնում է ծրագրային բյուջետավորման ձևաչափով ոլորտի տվյալ բյուջետային տարվա՝ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում պահանջող ծրագրերի (միջոցառումներ) վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը:

Իրավունքները՝

1) Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ոլորտային կազմակերպություններից ստանալ անհրաժեշտ տեղեկությունները և փաստաթղթեր.
2) Ներկայացնել առաջարկություններ ծրագրային բյուջետավորման ձևաչափով ոլորտի տվյալ բյուջետային տարվա՝ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում պահանջող ծրագրերի (միջոցառումներ) վերաբերյալ.
3) Մասնակցել Վարչության առջև դրված գործառույթների իրականացման հետ կապված խորհրդակցություններին:

Պարտականությունները՝

1) Վարչությանը վերապահված խնդիրների և գործառույթների լուծման ու իրականացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել Վարչության պետին.
2) Ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության և միջազգային տեխնոլոգիական շուկաները.

3) Հավաքել և միասնականացնել բարձր տեխնոլոգիական ոլորտում հայկական կազմակերպությունների վերաբերյալ տվյալներ.
4) Վերլուծել բարձր տեխնոլոգիական արտադրանքի ու ծառայությունների վաճառքի շուկաների պահանջները և պատրաստել համապատասխանության զեկույցներ.
5) Մասնակցել բարձր տեխնոլոգիաների ոլորտում միջազգային համագործակցության և քաղաքականության մշակման աշխատանքներին.
6) Պատրաստել վերլուծական նյութեր և առաջարկություններ՝ տեղական և միջազգային շուկաներում եկամտաբեր գործարքների խթանման նպատակով:

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն:

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության կամ միջազգային կապերի (հարաբերությունների) կամ ճարտարագիտության կամ հասարակական և հարակից գիտությունների բնագավառներում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Բանակցությունների վարում
2. Փոփոխությունների կառավարում
3. Փաստաթղթերի նախապատրաստում
4. Ժամանակի կառավարում

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունների շրջանակը

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային

կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: